

Դանիելյան Գ.
Երևանի պետական համալսարան
Մանուկյան Ա.
Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՆԵՐՈՒՄ

ABSTRACT FEATURES OF INTERCULTURAL COMMUNICATION IN SOCIAL MEDIA

As a result of the scientific analysis of the peculiarities of intercultural communication in social media, the article theoretically proves that the presence of certain personal qualities of media consumers is not enough for the formation and development of communication skills in social media, since here the communication process is inextricably linked with speech. Language literacy implies language proficiency and the practical application of all forms and methods of correct speech construction. And speech competence is the skill of creating methods for formulating thoughts and their appropriate application in the process of perceiving and transmitting information. The conviction is expressed according to which correctly constructed media cultural communication is a meaningful substantiation of language connections, mastery of the transmission mechanisms of words, phrases and sentences, the acceptance of language thinking, ethnic and socio-cultural stereotypes of the communicating parties, in compliance with the accepted norms of communication in social media.

Key words: *intercultural communication, media, social, media-culture, speech, culture, media-cultural clash.*

РЕЗЮМЕ ОСОБЕННОСТИ МЕЖКУЛЬТУРНОГО ОБЩЕНИЯ В СОЦИАЛЬНЫХ МЕДИА

В результате научного анализа особенностей межкультурного общения в социальных медиа в статье теоретически обосновано, что для формирования и развития навыков общения в социальных медиа недостаточно наличия определенных личностных качеств медиа потребителей, так как здесь процесс общения неразрывно связан с речью. Языковая грамотность подразумевает владение языком и практическое применение всех форм и методов правильного построения речи. А речевая компетентность – это навык создания методов формулирования мыслей и их уместного применения в процессе восприятия и передачи информации. Выражено убеждение, согласно которому правильно построенное медиакультурное общение является осмысленным обоснованием языковых соединений, владением механизмами передачи слов, словосочетаний и предложений, принятием языкового мышления, этнических и социокультурных стереотипов общающихся сторон, соблюдением принятых норм общения в социальных медиа.

***Ключевые слова:** межкультурное общение, медиа, социальный, медиакультура, речь, культура, медиакультурное столкновение.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սոցիալական մեդիաներում միջմշակութային հաղորդակցության առանձնահատկությունների գիտական վերլուծության արդյունքում հողվածում տեսականորեն հիմնավորվել է, որ սոցիալական մեդիաներում հաղորդակցական հմտություններ ձևավորելիս և զարգացնելիս բավարար չեն մարդու որոշակի անձնային առանձնահատկությունները, քանի որ այստեղ հաղորդակցական գործընթացն անմիջական կապ ունի խոսքի հետ: Լեզվական գրագիտությունը ենթադրում է լեզվի տիրապետում և խոսքի ճիշտ կառուցման բոլոր ձևերի և մեթոդների գործնական կիրառում: Իսկ խոսքի իրավասությունը մտքերի ձևակերպման մեթոդների ստեղծման և տեղեկատվության ընկալման ու փոխանցման գործընթացում դրանց համապատասխան կիրառման հմտությունն է: Արտահայտված է այն համոզմունքը, որ պատշաճ կառուցված մեդիամշակութային հաղորդակցությունը լեզվական կապերի իմաստալից հիմնավորում է, բառերի, բառակապակցությունների և նախադասությունների փոխանցման մեխանիզմների տիրապետում, հաղորդակցվող կողմերի լեզվա-

մտածողության, էթնիկական և սոցիալ-մշակութային կարծրատիպերի ընդունումն է, սոցիալական մեդիայում հաղորդակցության ընդունված նորմերին համապատասխանելը:

Բանալի բաներ՝ միջմշակութային հաղորդակցություն, մեդիա, սոցիալական, մեդիամշակույթ, խոսք, մշակույթ, մեդիամշակութային բախում:

Վերջին տասնամյակների ընթացքում սոցիալական մեդիաների շնորհիվ ընդլայնվել է տարբեր ազգերի և մշակույթների փոխադարձ շփման գործընթացը:

Ըստ ամերիկացի մեդիալեզվաբանների, մեդիամանկավարժների և մեդիահոգեբանների՝ ակնհայտ է, որ լոկ օտար լեզուների իմացությունը չի կարող ապահովել այնպիսի գիտելիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն հաղորդակցվել սոցիալական մեդիաներում և տարբեր իրավիճակներում: Հետևաբար բարձրագույն կրթության համակարգում այլ երկրների լեզուն և մշակույթն անհրաժեշտ է դասավանդել ժամանակակից մեդիատեխնոլոգիաների լայնածավալ կիրառման միջոցով՝ առաջնահերթությունը տալով ուսանողների միջմշակութային հաղորդակցության գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Գիտական գրականության մեջ «միջմշակութային հաղորդակցություն» եզրույթը հայտնվել է Լ.Ս Սամովարի և Ռ.Ե Փորթերի «Հաղորդակցությունը մշակույթների միջև» /Communication between Cultures/ դասագրքում, ինչով և սկիզբ է առել «միջմշակութային հաղորդակցություն» հասկացության լայնածավալ ուսումնասիրումն ու կիրառումը թարգմանության տեսության, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և մշակութաբանության ոլորտներում (Samovar, L. A., Porter, R. E., & McDaniel, E. R., 2010):

Միջմշակութային հաղորդակցությունը տարբեր դավանանքի, գիտելիքների, սոցիալական կարգավիճակի և էթնիկ խմբի պատկանող անհատների միջև ընդհանրական շփման ձև է: Միջմշակութային հաղորդակցության տեսությունը՝ որպես գիտաճյուղ, ուսումնասիրում և

նկարագրում է այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ այս տարբեր խմբերի ներկայացուցիչ անհատների կամ խմբերի միջև շփման, հաղորդակցության կամ համատեղ ապրելու և աշխատելու ընթացքում: Միջմշակութային հաղորդակցության արդյունավետության համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես են տարբեր մշակույթների պատկանող մարդիկ գործում, շփվում և ընկալում աշխարհը: Օրինակ՝ այլ, միմյանցից տարբեր մշակույթների և դրանց ներկայացուցիչների հետ շփում ունեցող մարդիկ պնդում են, որ մշակույթը կարող է բացահայտել հաղորդակցության ընթացքում տեղեկատվության կողավորման, այն փոխանցելու և մեկնաբանելու ձևերը: Որպես առանձին հասկացություն՝ միջմշակութային հաղորդակցությունը ասելով՝ հիմնականում նկատի ենք ունենում տարբեր մտածելակերպ, տարբեր մշակութային կենսագրություն (background) ունեցող անձանց շփման ձևերը, ինչը ներառում է միմյանց լեզվի, մշակույթի, սովորույթների ընկալումը: Այսօր միջմշակութային հաղորդակցությունն ուսումնասիրում են այնպիսի սոցիալական գիտություններ, ինչպիսիք են ազգագրությունը, մշակութաբանությունը, լեզվաբանությունը, հոգեբանությունը և հաղորդակցության տեսությունը: Ժողովուրդները, ազգերն ու հասարակություններն իրենց պատմության ընթացքում հանդիպում են տարբեր լեզուներ, կրոններ և մշակույթներ կրող հանրությունների և սովորում են միասին ապրել՝ հարգելով միմյանց լեզուն, մշակույթն ու սովորույթները: Մեր ժողովուրդը մշտապես եղել է տարբեր մշակույթների և կրոնների հաղորդակցման կենտրոնում: Ապրելով մի տարածաշրջանում, որը միջմշակութային, քաղաքական և տնտեսական համագործակցության խաչմերուկ էր հանդիսանում, անմիջական շփումներ ենք ունեցել բազմազգ և բազմակրոն հասարակությունների հետ: Մյուս կողմից՝ դարեր շարունակ տարբեր պետություններում, տարբեր մշակութային միջավայրերում որպես ազգային համայնք ապրելը մեզ հնարավորություն է տվել նախ տիրապետել օտարների լեզուներին, ճանաչել նրանց արժեքային համակարգը այնուհետև մշակել հարգանք և ըմբռնում տարբեր ժողովուրդների մշակույթների, արժեքների, ավան-

դույթների, սովորույթների նկատմամբ: Մշակույթը սահմանելու և տարբեր հանրությունների մշակույթների տարբերությունն ընդգծելու համար շատ հաճախ օգտագործվում է Հալլի և Գիբսոնի «այսբերգի» մոդելը, որտեղ տարբերում են «մշակույթ» հասկացության երկու դրսևորում.

- արտաքին դիտման համար տեսանելի և հասկանալի մշակույթ /արվեստ, գրականություն, կրոն, օրենք/,
- արտաքին դիտման համար ոչ միջտ տեսանելի կամ անտեսանելի մշակույթ /վարք, դիրքորոշումներ, ավանդույթներ, հավատալիքներ/, որոնք գտնվում են այսբերգի ոչ տեսանելի հատվածում, սակայն ելակետային են միջմշակութային հաղորդակցման համար (Hall E. T., 1990):

Մշակույթի այս տեսանելի մասի ուսումնասիրումը ենթադրում է հետևյալ բաղադրիչների ձևավորում.

- այլ մշակույթի ներկայացուցիչների հետ արդյունավետ հաղորդակցվելու կարողություն,
- միջմշակութային գիտելիքներն իրական կյանքում օգտագործելու ընդունակություն,
- լիարժեք միջմշակութային հաղորդակցում ապահովող միջոցների տիրապետում:

Միջմշակութային հաղորդակցության ձևավորմանը նպաստող միջոցներն են.

- լեզուն՝ որպես ոչ միայն հաղորդակցման, այլ նաև ընկալումը և մտածողությունը ներկայացնող համակարգ,
- ոչ խոսքային հաղորդակցումը և վարքը:

Միջմշակութային հաղորդակցման մեջ կարևոր նշանակություն ունեն մի քանի մեթոդներ, որոնք արդյունավետ են հաղորդակցման գործընթացում:

❖ **Միջմշակութային իրավասության մեթոդը**

«Իրավասությունը հասարակության մեջ զանազան ազգամշակութային խմբերի նկատմամբ դրական վերաբերմունքն է և հասարակության սոցիալական ու քաղաքական խմբերի կամավոր հարմարումը զանազան մշակութային խմբերի պահանջների հետ» (Грушевицкая Т., Попков В., Саохин А., 2002):

❖ **Հարմարվողականության դրսևորման մեթոդներ**

Ներմշակութայնացումը անհատի՝ իր սեփական մշակույթի ավանդույթներին, սովորույթներին, վարքաձևերին հարմարվելու գործընթացն է: Այս պարագայում տեղի է ունենում անհատի և մշակույթի փոխներգործություն, քանի որ մի կողմից ազգային մշակույթը ձևավորում է անհատին, մյուս կողմից՝ անհատը ևս ազդում է մշակույթի զարգացման վրա, այսինքն՝ այս դեպքում տեղի է ունենում փոխներգործություն, որովհետև անհատն ապրում և գործում է հենց այդ մշակույթի մեջ:

Արդիականացումը հարմարվողականությունն է, այն անհատի համար օտար մշակույթի յուրացման և ըմբռնման գործընթացն է: Իր համար օտար մշակութային միջավայրում անհատը պետք է կարողանա հարմարվել նոր պայմաններին: Այս դեպքում անհատի և մշակույթի միջև կարող են հակասություններ առաջանալ, այլ կերպ ասած՝ «մշակութային ցնցում»/ cultural shock /: Մշակութային ցնցումը շփոթության, վտանգի, տագնապի զգացումն է, որի արդյունքում նոր միջավայրն ընկալվում է որպես քառսային և ճնշող:

❖ **Միջմշակութային կրթության մեթոդ**

Հատկապես վերջին տարիներին մարդիկ սկսել են ավելի շատ տեղափոխվել իրենց մշտական բնակության վայրերից, արդյունքում միջմշակութային կրթությունը զանազան երկրներում ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում: Նորագույն մեդիատեխնոլոգիաները նոր մշակութային տեսանկյուններ են ի հայտ բերում, որի արդյունքում տեղի է

ունենում տեղեկատվության ազատ փոխանակում: Օտար լեզուն միջ-մշակութային կրթության կարևոր բաղադրամաս է, քանի որ այն մշակույթի կարևորագույն բաղադրիչներից է, որի միջոցով անհատը հասկանում և ընկալում է շրջապատող աշխարհը: Մակայն հաղորդակցման միջոց լինելով հանդերձ՝ լեզուն ի գորու է տարբեր երկրների մարդկանց միջև փոխըմբռնման անհաղթահարելի խոչընդոտներ առաջացնել (Головлева Е. Л., 2008):

Միջմշակութային հաղորդակցության խոչընդոտները պայմանավորված են հիմնականում այն գործոններով, որով միմյանցից տարբերվում են ազգային մշակույթները.

- նմանությունների և տարբերությունների գործոն,
- ազգականության և կոլեկտիվիզմի գործոն,
- ժամանակի չափումը և ընկալում,
- հասարակական և անձնական տարածության գործոն:

Որոշ հեղինակներ մշակույթները բաժանում են դիֆուզային և առանձնահատուկ մշակույթների: Առանձնահատուկ մշակույթը ենթադրում է անհատի հանրային և մասնավոր տարածքների կոշտ տարբերակում: Իսկ դիֆուզային մշակույթին բնորոշ է հանրային և մասնավոր տարածքների համակցումը: Առաջինը բնութագրվում է ընդարձակ հասարակական տարածքով, որտեղ անձնական տարածությունը սահմանափակ է և ուրիշ մարդու ներթափանցելը՝ անհնարին: Դիֆուզ մշակույթը բնութագրվում է անձնական տարածության ընդարձակմամբ, որը կլանում է իր մեջ նաև հասարակական տիրույթը (Deardorff D. K., 2008):

Արդյունավետ միջմշակութային հաղորդակցմանը խոչընդոտող գործոններից կարելի է առանձնացնել նաև ազգային կարծրատիպերը, կաղապարային մոտեցումը, էթնոկենտրոնությունը:

Համամիտ ենք հետազոտողներ Լ.Ա. Մամուլարի և Ռ.Ե. Փորթերի այն մտայնությանը, որ սոցիալական մեղիաներում միջմշակութային հաղորդակցությունը հաղորդակցման գործընթացին մասնակից տարբեր մշակույթներ և արժեքներ կրող երկու կողմերի փոխըմբռնումն է: Սոցիալական յուրաքանչյուր մեղիա նպաստավոր հարթակ է մշակու-

թային տարբեր ընկալումներ և խորհրդանիշերի համակարգ ունեցող անձանց կամ խմբերի հաղորդակցումն ուսումնասիրելու համար (Deardorff D. K., 2008):

Իրականացված բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ սոցիալական մեդիաներում միջմշակութային հաղորդակցությունը կարող է իրականանալ կա՛մ խմբային, կա՛մ միջանձնային մակարդակում: Ն. Բրուքսի կարծիքով, մարդիկ ֆիզիկապես և հոգեպես նույնն են, տարբեր են նրանց փոխհարաբերությունները, ինչն էլ պայմանավորված է տեղանքով: Հետևաբար, մեդիասպառողների աշխարհընկալումը կախված է նրանց մշակույթից (Brooks N., 1986):

Այսօր մեդիատեխնոլոգիաների սրընթաց զարգացման և դրանց ազդեցության ներքո հաղորդակցման մեթոդների, միջոցների, ձևերի և հնարների փոխակերպման պայմաններում յուրաքանչյուր ազգի մշակույթը սոցիալական մեդիա դաշտում դրսևորվում է մեդիամշակույթի ձևավորվածության մակարդակում: Մշակույթը արժեհամակարգից բխող տարբեր գործունեությունների ամբողջություն է, իսկ մեդիամշակույթը՝ բարդ և բազմաբնույթ երևույթ, որն արտացոլում է մարդկային գոյության բոլոր կողմերը: Այն ուսումնասիրվում է մի շարք գիտությունների համատեքստում՝ մեդիալեզվաբանություն, մեդիակրթություն, մեդիահոգեբանություն, և ունի բազմաթիվ սահմանումներ, որոնք մասնագետները ներկայացնում են հետևյալ խմբավորմամբ՝ նկարագրական, կանոնավորող, մանկավարժական, հոգեբանական և տեխնոլոգիական:

Է. Սեպիրը տվել է «մշակույթ» եզրույթի 3 կարևոր բացատրություններ.

- Մշակույթը սոցիալական արժեքների ժառանգություն է, որը կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր:
- Մշակույթն անցյալից ժառանգված արժեքներն են:
- Մշակույթը քաղաքակրթության յուրահատուկ դրսևորում է, որն արտացոլում է ազգային ոգին (Сепир. Э., 1993):

Սոցիալական մեդիաներում միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից համակարծիք ենք Է. Սեպիրի հետ, քանզի ինչպես մշակույթն ընդհանրապես, այնպես էլ մեդիամշակույթը մասնավորա-

պես նյութական, հոգևոր, ազգային, համաշխարհային և գիտական արժեքների ժառանգությունն է:

Ի տարբերություն Է. Մեյիրի, Բ.Ս. Բիբլերը մշակույթը դիտարկում է որպես տարբեր մշակույթներ ներկայացնող մարդկանց հաղորդակցման և երկխոսության ձև, սակայն մյուս կողմից այն համարում է ինչ-որ հասարակությանը պատկանող անհատի ինքնահաստատման կառուցակարգ (Библиер В. С., 1989):

Հատկանշական է Յու. Բ. Պիկուլյևայի կողմից ներկայացվող մշակույթի համընդհանուր բնութագիրը, որը գուրահեռվում է մեդիամշակույթի բնութագրիչների հետ: Հեղինակը գտնում է, որ մշակույթն ու մեդիամշակույթը որքան տարբեր են, նույնքան էլ մեկտեղված են՝ լինելով հասարակական արժեքների, խորհրդանիշերի և նշանների համակարգ, մարդկանց կողմից իրացվող համատեղ նախագծերի արդյունք:

- Մշակույթը չի ժառանգվում կենսաբանորեն, այն փոխանցվում է հասարակությանը սերնդեսերունդ:
- Այս կամ այն մշակույթն արտացոլող առարկաները կրում են խորհրդանշական բնույթ, դրանք պարունակում են ուրույն նշանակությամբ նշանային համակարգեր (Пикчулева Ю. Б. 2002):

Մեր կարծիքով մշակույթն ինքնին ավելի տարածական է: Այն ներկայացնում է այս կամ այն ազգին կամ ժողովրդին բնորոշ արժեքային համակարգ: Ընդհանուր առմամբ, խոսքն ազգային արժեքների համակարգի մասին է, որի շնորհիվ մեկ ազգը տարբերվում է այլ ազգերից:

Այս համապատկերում ակնհայտ է, որ սոցիալական մեդիաներում լայն հնարավորություն է ընձեռնվում հասկանալու հասարակական գիտակցության յուրահատկությունը, տեսնել մշակույթների տարբերությունը:

Այստեղից հարց՝ ի՞նչ է մեդիամշակութային բախումը: Մի կողմից հետաքրքրությունների հակամարտություն է, մյուս կողմից՝ փոխհարաբերությունների ընթացքում առաջացած որոշ հակասությունների պարզաբանման միջոց:

Մեդիամշակութային բախումների պատճառ կարող են հանդիսանալ մեդիասպառողների վարքի դրսևորման ձևերի անհամապատասխանությունը, տարբեր ազգերի տարածքային և էթնոմշակութային վեճերը, օրինակ՝ հայերի և ադրբեջանցիների, կրոնական խմբերի գաղափարախոսություններն ու պաշտամունքի օբյեկտները, օրինակ՝ քրիստոնյաների և մահմեդականների, սերունդների և տարբեր տեղանքի բնակիչների սովորույթները, օրինակ՝ հոր և որդու, գյուղի և քաղաքի, տարբեր լեզվամշակութային համայնքների և նրանց ներկայացուցիչների միջև (Манукян А.М., 2019):

Միջմշակութային բախումների առաջացման պատճառները նույնքան տարածական են. բախման հիմքում ընկած է ոչ միայն լեզվի անբավարար իմացությունը, այլև մասնակիցների միջև խոսքի սխալ ընկալումը:

Այս կարծիքին է նաև Վ.Վ. Սաֆոնովան, ով նշում է, որ նույնիսկ լեզվաբանական իրազեկության բարձր մակարդակում հաղորդակցվող կողմերի շփումը կարող է չստացվել (Сафонова В. В., 1996):

Մեր կարծիքով, թյուր է Վ. Գումբոլտի այն պնդումը, որ լեզվի բավարար իմացությունը խնդրահարույց իրավիճակից խուսափելու միջոց է (Гумбольдт В., 1985): Գտնում ենք, որ օտար լեզվի իմացությունը լիովին չի երաշխավորում մեդիասպառողների միջև միջմշակութային հաղորդակցության հաջողությունը, քանի որ բախման պատճառ կարող են հանդիսանալ ազգային կարծրատիպերը և նախապաշարումները: Ուստի գալիս ենք այն եզրահանգման, որ մեդիամշակութային հաղորդակցությունը բարդ և հակասական գործընթաց է, որտեղ սուր անկյունները հարթելու լավագույն միջոցը միջմշակութային երկխոսությունն է:

Ըստ Օ. Վ. Չիրիսովայի՝ «երկխոսություն» ասելով հասկանում ենք.

- երկխոսություն մշակութային արժեքներ ստեղծողի և սպառողի միջև,
- սերունդների երկխոսություն,

- երկխոսություն, որը կնպաստի ազգերի փոխգործակցությանը, փոխհամաձայնությանն ու խաղաղ համակեցությանը (Чибисова О. В. 2011):

Այս համապատկերում խիստ կարևորվում է մեղիամշակութային իրազեկության դերը, առանց որի չի կարող իրականանալ երկխոսություն: Մեղիամշակութային իրազեկություն ձևավորելու անհրաժեշտությունը պայմանավորված է ժամանակակից հասարակության զարգացման հետ, որը ներառում է տեղեկատվական, սոցիալական և տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև մշակույթների միջև կապի ընդլայնումը:

Ն. Դ. Գալսկովայի և Ն. Ի. Հեզի կարծիքով մեղիամշակութային իրազեկությունը կարողություն է, որն անհատին թույլ է տալիս իրեն դրսևորել մեղիա դաշտում ծավալվող մշակութային երկխոսության մեջ: Մեղիամշակութային իրազեկությունն իր մեջ ներառում է օտար լեզուների իմացությունն ու մշակութային փորձի զարգացումը (Гальскова Н. Д., 2004):

Ա. Յու. Մուրատովի կարծիքով մեղիամշակութային իրազեկությունը անհատի կրթական բարդ գործընթաց է, որն իր մեջ ներառում է սեփական և մեկ այլ մշակույթի վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, մեղիատեխնոլոգիական կիրառական կարողություններ և հմտություններ, ինչպես նաև անձնային համապատասխան որակներ (Муратов А. Ю. 2005):

Ինչ վերաբերում է մեղիամշակութային հաղորդակցության սոցիալ-հոգեբանական հիմքերին, ապա վերջին ժամանակներում առավել ընդգրկուն հետազոտություններ են իրականանում մեղիահոգեբանության և մեղիալեզվաբանության ոլորտներում, հատկապես, երբ այն վերաբերում է հասարակական վարքականոններին և լեզվամտածողությանը:

Ինչպես իրավացիորեն նկատել են Ջ.Բերրին և այլք, ի սկզբանե մեղիամշակութային հաղորդակցության ուսումնասիրությունները հասարակության ընկալումների շրջանակներում էին, և միայն կրթության

համաշխարհայնացման գործընթացների ակտիվացման պայմաններում գերակա խնդիր դարձան հասարակական վարքականոնները, վարքային դրսևորումները և մեդիասպառողների լեզվամտածողությունը, քանզի դրանցով բացահայտվում են միջմշակութային տարբերությունները, օրինակ, հայի և անգլիացու միջև (Berry J. W., Poortinga Y. H., Segall M. H and Dasen, 2002):

Անհերքելի է, որ հատկապես մեդիա դաշտում մարդիկ անհանդուրժող են այլ մշակութակիրների հետ շփվելիս: Ըստ Ն. Ֆիջերալդի՝ անձի մեդիամշակութի ձևավորումն ու զարգացումը նպաստում են սեփական և օտար ազգերի կողմից նրա ընդունվելուն (Fitzgerald H., 2003):

Շարադրանքից ելնելով՝ ձևավորվում է այն համոզմունքը, որ մեդիամշակութային հաղորդակցության առարկան ոչ միայն մշակույթն է՝ իր տարաբնույթ դրսևորումներով, այլ նաև այն մեդիասպառողները, ովքեր այս կամ այն առումով մասնակցում են միջմշակութային հաղորդակցմանը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում անգլերենի ուսուցման տեսանկյունից մեդիամշակութային հաղորդակցության անմիջական կրողներն ուսանողներն են, ովքեր, հասնելով իրագեկության բարձր մակարդակի, պետք է դրսևորեն հանդուրժողականություն և հարմարվողականություն այլ լեզվամտածողության, այլազանության և բազմազանության նկատմամբ՝ անկախ հաղորդակցվող կողմի ազգային-մշակութային պատկանելությունից:

Այսպիսով, վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ սոցիալական մեդիաներում հաղորդակցական հմտություններ զարգացնելիս բավարար չեն մարդու անձնային առանձնահատկությունները, քանի որ այս հարթակում հաղորդակցական գործընթացն անմիջական կապ ունի խոսքային գործունեության հետ: Լեզվական գրագիտությունը ենթադրում է լեզվի մասին գիտելիք և լեզվական բոլոր միջոցները գործիմաց կիրառելու կարողություն, մինչդեռ խոսքային իրավասությունը՝ մեթոդներ ստեղծելու և մտքեր ձևակերպելու, դրանք

խոսքի փոխանցման և ընկալման գործընթացում ճիշտ և տեղին գործածելու հմտություն է :

Ճիշտ կառուցված մեդիահաղորդակցությունը լեզվական միավորների իմաստաբանական հիմնավորումն է, խոսքի ստեղծման և փոխանցման մեխանիզմների տիրապետումը, առաջացած խոսքամշակութային որոշակի իրավիճակում, ցանկացած խոսույթի արտաբերման կարողությունը, հաղորդակցվող կողմի լեզվամտածողությունը, ազգային և մշակութային առանձնահատկությունները հաշվառելու, մեդիա դաշտում ընդունված վարքականոնները պահպանելու հմտությունն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Библер В. С.** (1989), Культура. Диалог культур. Вопросы философии, № 6. - С. 31-42.
2. **Гальскова, Н. Д. (2004)**, Теория обучения иностранным языкам: Лингводидактика и методика: Учеб. пособие для студ. лингв, ун-тов и фак. ин. яз. высш. пед. учеб. заведений Текст. / Н. Д. Гальскова, Н. И. Гез. М.: Издательский центр «Академия», с. 336.
3. **Головлева Е. Л. (2008)**, Массовые коммуникации и медиапланирование //Феникс, Ростов на Дону, с. 200.
4. **Грушевицкая Т., Попков В., Саохин А. (2002)**, Основы межкультурной коммуникации // Учебник для вузов, с. 277.
5. **Гумбольдт В. (1985)**, Язык и философия культуры, М.: с. 452.
6. **Манукян А.М. (2019)**, Социально-психологические механизмы гипнотического манипулирования сознанием масс в медийном пространстве на примере социальных сетей (Vk, Facebook, instagram) Азимут научных исследований : Педагогика и психология. Москва, Т 8. N 3(28) с. 345-347.
7. **Муратов А. Ю. (2005)**, Использование проектного метода для формирования межкультурной компетенции //Интернет-журнал «Эйдос», <http://www.eidos.ru/journal/2005/0523.htm>.
8. **Сафонова В. В. (1996)**, Изучение языков международного общения в контексте диалога культур и цивилизаций. Истоки. Воронеж., с. 237.

9. **Сепир. Э. (1993)**, Избранные труды по языкознанию и культурологии. М., с. 656.
10. **Пикулева Ю. Б. (2002)**, Культурный фон современной телевизионной рекламы // Известия Уральского государственного университета. – Екатеринбург, № 24. с. 268-276.
11. **Чибисова О. В. (2011)**, Взаимодействие молодежных субкультур как тип межкультурной коммуникации.- *LAP LAMBERT Academic Publishing* ISBN, с. 192.
12. **Berry J. W., Poortinga Y. H., Segall M. H and Dasen (2002)**, Cross-Cultural Psychology: Research and Applications, (2nd edition). Cambridge: Cambridge University Press, 588p.
13. **Brooks N. (1986)**, Culture in the classroom. In JM Valdes (Ed.) Culture bund. Cambridge: Cambridge University Press, pp. 123-129.
14. **Deardorff D. K. (2008)**, What is Intercultural Competence? //Kellner-verlag. Germany, p. 10.
15. **Fitzgerald H. (2003)**, How different are we? Spoken discourse in intercultural communication. Clevedon: Multilingual Matters.
16. **Hall E. T. (1990)**, Understanding Cultural Differences //Intercultural Press, p. 86.
17. **Samovar, L. A., Porter, R. E., & McDaniel, E. R. (2010)**. Communication between cultures (7th ed.). Boston, MA: Wadsworth Cengage Learning.
18. **Samovar, L. A., & Porter, R. E. (1997)** (Eds.). Intercultural communication: A reader (eighth ed.). Belmont, Ca: Wadsworth Publishing Company, p. 244.

Դանիելյան Գայանե - մ.գ.թ., սաիստենտ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 2 ամբիոն, էլ. փոստ՝ g.danielyan@mail.ru:

Մանուկյան Արմինե – մ.գ.թ., դոցենտ, Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, մանկավարժության ամբիոն, էլ. փոստ՝ arminemanukyan@rambler.ru:

Ներկայացվել է խմբագրություն՝ 09.12.21, տրվել է գրախոսության՝ 13.12.21 - 20.12.21, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 2 ամբիոնի կողմից, ընդունվել է սպագրության՝ 27.12.21: